

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ
ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԿԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Արարատ համայնքի սիրելի՛ ուսանողներ և երիտասարդներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ Ուսանողների ու երիտասարդների օրվա կապակցությամբ: Այսօր, մեր երկրի, մեր նորաստեղծ համայնքի առաջընթացի ու ձեռքբերումների հիմնական գրավականը մտածող, խելացի և նպատակասլաց երիտասարդությունն է: Մենք մեր երկրում, մեր համայնքում ունենք շատ խելացի երիտասարդներ, ովքեր և՛ իրենց գիտելիքով, և՛ իրենց հայրենասիրությամբ և իրենց անմնացորդ նվիրումով ամեն անգամ ապացուցում են, որ մեր երկիրը ունի՛ լուսավոր ու պայծառ ապագա:

Մենք վստահ ենք, որ մեր երիտասարդների ներուժն ու եռանդն անփոխարինելի են մեր համայնքի առաջընթացի գործում, նաև վստահ ենք, որ այսօրվա երիտասարդներն իրենց ողջ եռանդով ու նվիրումով շարունակելու են արժանապատվորեն մասնակցել մեր երկրի զարգացմանը, առաջընթացին ու այն արժանվույն աշխարհին ներկայացնելու կարևոր գործին:

Սիրելի՛ ուսանողներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ Ուսանողության և երիտասարդության այս կարևոր օրվա առթիվ, մաղթում եմ ձեզ առողջություն, սեր, երջանկություն և հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ